

**Հայտնություն 15**

**Հայտնության գրքի ամենակարճ գլուխը**

1) Եվ մի ուրիշ նշան տեսա երկնքում, մեծ ու զարմանալի. Յոթ հրեշտակներ, որոնք վերջին յոթ պատուհասներն ունեին, քանի որ նրանց միջոցով էր ավարտվում Աստծո բարկությունը:

2) Ու տեսա, ասես, մի ապակյա ծով՝ կրակով խառնված. և նրանք, որ հաղթեցին զազանին ու նրա պատկերին և նրա դրոշմին և նրա անվան թվին, կանգնել էին ապակյա ծովի վրա և ունեին Աստծո քնարները:

«**Ապակյա ծով**». կրակով խառնված. կանգնել էին դրա վրա (ոչ թե դրա «կողքը», ինչպես NIV-ում է, հունարեն այս նախդիրը կարող է նշանակել՝ վրան կամ վերևում): Աշխարհը նայում էր նրանց որպես պարտվողների. գերեվարված, նախատված, հալածված, ասված: Նրանք ազատ մուտք ունեին երկինք:

3) Եվ Աստծո ծառայի՝ Մովսեսի երգն էին երգում ու Գառնուկի երգը՝ ասելով. «Մեծ ու զարմանալի են Քո գործերը, ո՛վ Տեր Աստված Ամենակալ: Արդար ու ճշմարիտ են Քո ճանապարհները, ո՛վ սրբերի Թագավոր:

«Հավիտենական» Թագավոր. Ա Տիմ. 1:17

1 Տիմ. 1:17 - 17 Բայց հավիտենից Թագավորին, այն անեղծին և աներեվույթին, այն մեկ Աստուծուն լինի պատիվ և փառք հավիտեանս հավիտենից. Ամեն:

«**Մովսեսի երգը**». Ել. 15:1-21, Բ Օր. 32:1-43: (Երգեցին նախքան Օրենքի տրվելը Ել. 19-ում):

«**Գառնան երգը**». Հայտ. 5:9-12:

<sup>9</sup> Եւ նոր երգ են երգում և ասում. Արժանի ես առնելու այդ գիրքը և դորա կնիքները բանալու, որովհետև մորթուեցար, և քո արինով մեզ գնեցիր Աստուծո համար ամեն ցեղից և լեզուից և ժողովրդից և ազգից. <sup>10</sup> Եւ մեր Աստուծո համար մեզ թագաւորներ և քահանաներ արիր, և երկրի վրա թագաւորութիւն կ'անենք: <sup>11</sup> Եւ տեսա, և շատ հրեշտակների ձայն լսեցի աթոռի և չորս կենդանիների և երեցների չորս կողմովը. և նորանց համարն էր բիւրերի բիւրեր և հազարների հազարներ. <sup>12</sup> Որ մեծ ձայնով ասում էին. Արժանի է մորթուած Գառն առնելու և զօրութիւն, և հարստութիւն, և իմաստութիւն, և կարողութիւն, և պատիւ, և փառք, և օրհնութիւն:

**Հիշեք.** Հայտնությունը Քրիստոսակենտրոն է: Մի շեղվեք չորս ձիավորներով, յոթ փողերով. Ո՞վ է բացահայտվում այս գրքում: (Տարբեր հին ձեռագրեր ունեն երեք տարբեր թարգմանություններ. սրբերի Թագավոր, ազգերի Թագավոր, հավիտենական Թագավոր

(Եր. 10:7,10), հավիտենական Թագավոր, անմահ, աներեկույթ և միակ իմաստուն Աստված (Ա Տիմ. 1:17):

**4) Տէր, ո՞վ է, որ չի վախենալու Քեզնից, ու Քո անունը չի փառավորելու, քանի որ միայն Դու ես սուրբ, քանի որ բոլոր ազգերը գալու են և Քո առաջ երկրպագելու են, որովհետև Քո դատաստանները հայտնի դարձան»:**

Նկատե՞ք, թե որքան է պակասել Աստծո վախը մեր օրերում... Շատ քիչ կա Աստծո հանդեպ ճիշտ վախ, անգամ հավատացյալների մեջ... «Ազգերը կգան ու կերկրպագեն...»: Այսօր դատելի չի ունենում: Անբարոյությունը, անաստվածությունը և անարդարությունը (հենց մեր երկրում) ավելի ու ավելի ցայտուն է դառնում (Սաղմ. 7:9, 11:7, 107:1,40,42, Ps 2:8, Փիլ. 2:9-11): Դատաստանն առաջ է գալիս Նրա սրտի սրբությունից. ներքին տաճարը, 7-րդ փողը բացահայտում է Աստծո տաճարը (11:19):

*Հայ. 11:19 - 19 Եւ Աստուծո տաճարը որ երկնքումն էր բացուեցավ, և երևաց Աստուծո տապանակը իր տաճարում, և եղան փայլատակներ և ձայներ և որոտմունքներ, և շարժ և մեծ կարկուտ:*

**5) Եվ սրանից հետո նայեցի, և, ահա՛, բացվեց վկայության խորանի տաճարը, որ երկնքում էր.**

**Սրբության Սրբոցը.** Տաճարը, այս գրքում, հիշատակվում է 15 անգամ, սակայն ոչ մինչև 4-րդ գլուխը, երբ Եկեղեցին վերցվում է: Դրանից հետո, Աստված գործ է ունենում մարդկանց հետ, ովքեր տաճար են ունեցել. երկնային բաների խորհրդապատկերը (Ել. 25:40, Եբր. 9:23):

6) Ու տաճարից դուրս եկան յոթ հրեշտակները, որոնք յոթ պատուհասներն ունեին, մաքուր ու պայծառ **կտավ հագած** և իրենց կրծքերին ոսկե գոտի կապած: 7) Եվ չորս կենդանիներից մեկը յոթ հրեշտակներին յոթ ոսկյա թասեր տվեց, որ լեցուն էին Աստծո բարկությամբ, որն ապրում է հավիտյանս հավիտենից:

**Կտավ հագած:** Մեկ այլ տարբերակ. թանկագին քարեր: Թասեր, բուրվառ (Հայտ. 5:8), ինչպիսին օգտագործվում է պաշտամունքի մեջ:

8) Եվ տաճարն Աստծո փառքից ու Նրա գորությունից ելած **ծխով լցվեց**, և ոչ մեկը չէր կարող տաճարը մտնել, մինչև ի կատար ածվեին յոթ հրեշտակների յոթ պատուհասները:

«**Ծուխ**». Ես. 6:1-4, Ղևտ. 16:12,13, Ահարոնը, Քավության օրը, պետք է բուրվառ ունենար ածուխները մեջը, որպեսզի չմեռներ: Անգամ փրկվածների մուտքն էր արգելված: Աստված

միայնակ է կրում մեղքի սարսափը: Յոթ թասերով այս յոթ հրեշտակները հստակ ցույց են տալիս, որ այս դատաստաններն Աստծուց են գալիս, ոչ թե մարդկանց սխալներից կամ սատանայի թշնամությունից: Զգուշացե՛ք Գառան բարկությունից:

(Յոթ եկեղեցիները = եկեղեցու ամբողջական պատմությունն են: Յոթ = ամբողջություն:  
Կարելի է գուգահեռներ տանել յուրաքանչյուր յոթերի շարքերի վիջև...):

## Հայտնություն 16 Թասեր՝ գազանի թագավորության վրա

### Յոթնապատիկ կառուցվածքը – էջ 168

1) Եվ տաճարից մի ուժգին ձայն լսեցի, որ յոթ հրեշտակներին ասում էր. «Գնացե՛ք, Աստծո բարկության յոթ թասերը դատարկեցե՛ք երկրի վրա»:

2) Եվ **առաջինը** գնաց ու իր թասը դատարկեց երկրի վրա, և չար ու մորմոքող պալարներ գոյացան այն մարդկանց վրա, ովքեր կրում էին գազանի դրոշմը ու նրանց վրա, ովքեր նրա պատկերին էին երկրպագում:

«**Երկիր**». մորմոքող պալարներ գազանին երկրպագողների վրա (6-րդ պատուհասը, Ել. 9:8-11), չիրականացած մարգարեություն, Բ Օր. 28:27,35: Պալարներ = ներքին ապականության արտաքին նշան (Մաթ. 23:27,28):

**Մովսես**. «ոչ մի քանդակած պատկեր». երկնքի զորքերի պաշտամունք (Բ Օր. 4:19, 17:2,3, Դ Թագ. 17:9-11,16,17): Ել. 8:17,18, 9:1. սատանան պաշտվում է Աստծո Տան մեջ: Առաջին թասը 6-րդ պատուհասի հետ (Ել. 9:8-12):

3) Ու **երկրորդ հրեշտակը** իր թասը ծովի վրա դատարկեց, և ջրերը մեռած մարդու արյան նման դարձան, և ծովում եղած բոլոր կենդանի արարածները մեռան:

«**Արյուն**». բառացի՞ արյուն: (Մաղմ. 105:29, Ղևտ. 17:11), առաջին պատուհասը (Ել. 7:20-25): Այդ տարածքի ողջ ծովային կյանքը մահանում է:

4) Ու **երրորդ հրեշտակը** իր թասը գետերի ու ջրերի ակունքների վրա դատարկեց, ու դրանք արյուն դարձան: 5) Եվ ջրերի հրեշտակից լսեցի, որ ասում էր. «Արդա՛ր ես Դու, ո՛վ Տեր, որ ես և էիր և լինելու ես, որովհետև այսպիսի դատաստաններ տեսար»: 6) Որովհետև նրանք սրբերի ու մարգարեների արյունը թափեցին, և Դու նրանց արյուն խմել տվեցիր, որովհետև արժանի են»:

«**Գետեր**». գազանին երկրպագողները չէին կարողանում ուրիշ խմելու քան գտնել, բացի արյունից (Ել. 7:20,21):

Ել. 7:20-21 - 20 Եւ Մովսէսն ու Ահարօնը Եհովայի պատուիրածի պէս արին, և նա գավազանը բարձրացրեց և Փարավօնի առաջին և նորա ծառաների առաջին գետի միջի ջրերին գարկեց, և գետի միջի բոլոր ջրերը արյուն դառան: 21 Եւ գետի մէջ եղած ձկները մեռան, և գետը հոտեց, և Եգիպտացիք չէին կարողանում գետիցը ջուր խմել. և արյունը Եգիպտոսի բոլոր երկրի մէջ կար:

(Հունարենը բաց է թողնում «և գալու է»: «Նա, որ է, որ էր, Մուրբը»: Չկա նշում Նրա մասին, ով գալու է):

7) Եվ **գոհասեղանից** մի ուրիշ ձայն լսեցի, որ ասում էր. «Այո՛, Ամենակա՛լ Տէր Աստված, ճշմարիտ ու արդար են Քո դատաստանները»:

Հին ասացվածքն ասում է. «Ինչ անես, քեզ կանես»: Զոհասեղանը խոսում է. Խա՞ջը (5-րդ կնիքը. Հայտ. 6:9-11): Այս գոհասեղանը նահատակների ծածկոցն էր... նաև քո՞նը:

(Նշում. առաջին երեք թասերը՝ երկրի վրա ապրող մարդիկ: Վերջին չորսը՝ Բաբելոնի հետ կապ ունեցող մարդիկ):

8) Եվ **չորրորդ հրեշտակն** իր թասը արևի վրա դատարկեց. Ու նրան գորություն տրվեց, որ մարդկանց խորշակահար անի կրակով: 9) Եվ սաստիկ տաքից մարդիկ խորշակահար եղան և հայիոյեցին Աստծո անունը, որ այս պատուհասների վրա իշխանություն ունի. և չապաշխարհեցին, որ Նրան փառք տան:

«Տաք». Բ Օր. 32:22,24, Մադ. 4:1, Ես. 24:4-6, Բ Պետ. 3, Ղուկ. 21:25:

«...**չապաշխարհեցին**...». «Ավելի հեշտ է փոխել պլատոնիումի բնական հատկությունները, քան մարդու չար սիրտը» (Ալբերտ Էյնշտեյն):

## Արևի պաշտամունք

Հին հեթանոսությունից, սկիզբը Սենաար հարթավայրից:

Նեբրովթը (Ծննդ. 10:8-10): Եբրայերեն՝ *marad*՝ «ըմբոստանալ», ապառնի՝ «մենք կըմբոստանանք»: Համաշխարհային վերջնական բռնակալը ասորեստանցի կլինի.

(«Նեբրովթ 2-ը՝) Միքիա 5:5,6, Եսայի 10:

«Եվ Քուշը ծնեց Նեֆրովթին. Սա սկսեց երկրի վրա հզորանալ: Նա Տիրոջ առջև մի հզոր որսորդ էր. Դրա համար ասվում էր. «Նեֆրովթի պես հզոր որսորդ Տիրոջ առջև»: Եվ նրա թագավորության սկիզբը Բաբելոնն էր, և Արեքը, Աքադը և Քաղանեն՝ Սենաար երկրում» (Ծննդ. 10:8-10):

Արևի պաշտամունքը սկսվեա Նեֆրովթի և նրա հետևորդների կողմից Սենաար հարթավայրում, և Բաբ-Էլը արևին նվիրված առաջին տաճարի վայրն էր: Ծննդ 11:4: Ողջ հեթանոսությունը ծագել է այստեղից: Սա նաև բացատրում է աշխարհի բոլոր կողմերում գոյություն ունեցող հեթանոսական առասպելների միջև եղած զուգահեռների գոյությունը:

## Նեֆրովթը

Նեֆրովթը համոզում էր մարդկանց, որ իրենց երջանկությունը վերագրեին ոչ թե Աստծուն, այլ մտածեին, որ իր գերզանցությունն էր դրա աղբյուրը: Եվ շուտով նա ամեն բան փոխեց բռնակալության, մտածելով, որ ուրիշ այլ ճանապարհ չկար մարդկանց Աստծո վախից կտրելու համար, բացի ստիպելուց, որ նրանք ապավինեին իր զորության: Հովսեփոս. «Հրեական հնախոսություն» I.c.4.2:

Աշխարհի արարումից ի վեր ոչ ոք Նեֆրովթի նման չի եղել՝ որսորդության մեջ հզոր և ապստամբ Տիրոջ դեմ: Հովսեփոս. «Թարգում»:

10) Եվ **հինգերորդ հրեշտակն** իր թասը գազանի աթոռի վրա դատարկեց, ու նրա թագավորությունը **խավարեց**, և ցավից իրենց լեզուներն էին ծամծամում: 11) Ու երկնքի Աստծուն հայհոյեցին իրենց ցավերի ու իրենց պալարների պատճառով և իրենց գործերից չապաշխարհեցին:

Գազանի (պետք է որ մարդու լինի) աթոռը (գահը): Հայտ. 13. «Ո՞վ է, որ կարող է դրա (գազանի) դեմ պատերազմել»: Ահա պատասխանը. Աստված կարող է դրա դեմ պատերազմել: Շոշափելի խավար (Ել. 10:21-23): Ես. 60:2, Հովել 2:1-2,31, Նավում 1:8, Մարկ. 13:24,25:

## Խավար

Խավարի չբացատրված օրինակներ.

- մայիսի 19, 1780թ., Նոր Անգլիա New England, «Խավար օրը»

- Մարտի 19, 1886թ., Կենտրոնական Վիսկոնսին Central Wisconsin, (10 րոպե)

- Դեկտեմբեր, 1904թ., Մեմփիս, Թենեսսե, Memphis, Tennessee
- Մարտ, 1911թ., Լյուսվիլ, Կենտուկի, Louisville, Kentucky

**Յոզևր խավար.** առաջին զոհը ճշմարտությունն է. Էվոլյուցիա, Հոգեբանություն, Պաղեստինյան պետություն, Իսլամ, Օրինապաշտություն, Մեդիա, Կառավարական դպրոցներ և այլն:

12) Եվ վեցերորդ հրեշտակը իր թասը մեծ գետի՝ **Եփրատի** վրա դատարկեց, և նրա ջրերը ցամաքեցին, որպեսզի Արևելքի թագավորների ճանապարհը պատրաստվի:

**Եփրատ**

Մարդկային քաղաքակրթության օրրանը (նաև գերեզմանը) (Զաք. 10:11, Ես. 11:15,16): Իսրայելի (Ծննդ. 15:18) և Հռոմեական կայսրության արևելյան սահմանը...

Ծննդ. 15:18 - 18 Այն օրը եհովան Աբրամի հետ ուխտ դրավ ասելով, Քո սերունդին տուի այս երկիրը Եգիպտոսի գետից մինչև մեծ գետը այսինքն Եփրատ գետը.

**Աստվածաշնչում Եփրատը հիշատակված է 25 անգամ.**

ցամաքել (Կարմիր ծովը, Հորդանանը): Այն ունի 1800 մղոն (2897կմ) երկարություն, 300-1200 յարդ (275-1100մ) լայնություն, 10-30 ոտնաչափ (3-9մ) խորություն, հաճախ ավելի խորը և ավելի լայն... 1991թ.-ին Պարսից Ծոցի պատերազմի ժամանակ 30 երկրներ զսպեցին Սադամ Հուսեյնի զորքերը Եփրատ գետի մոտ:

13) Եվ տեսա, որ վիշապի բերանից ու գազանի բերանից և սուտ մարգարեների բերանից երեք պիղծ ոգիներ էին դուրս գալիս գորտերի տեսքով: 14) Որովհետև նրանք դևերի ոգիներ են, որ հրաշքներ են անում ու գնում են երկրագնդի ու ամբողջ աշխարհի թագավորների մոտ, որպեսզի նրանց հավաքեն Ամենակալ Աստծո այդ մեծ օրվա պատերազմի համար:

«վիշապ... գազան... սուտ մարգարե». անսուրբ երրորդություն<sup>օ</sup>: Գորտեր. 2-րդ պատուհասը (Ել. 8:2-5,14), այս մորեխները դևեր են (Հայտ. 9, Ամովս 7:1, Եզեկ. 38 (գորտերն ի պատասխան փարավոնի մոգերի):

**15) Ահա գալիս եմ գողի պես: Երանի նրան, որ արթուն կմնա ու մաքուր կպահի իր հանդերձները, որպեսզի մերկ չջրջի, ու նրա ամոթը տեսնեն:**

**Յանդերձներ.** հին անգլերենով՝ «սովորություն» = ապրելակերպ, ֆրանսերեն՝ շորեր... «Իսկ դուք, եղբայրներ ի խավարի մեջ չեք, որ այն օրը գողի պես ձեր վրա հասնի (Ա Թեսաղ. 5:4):

16) Եվ նրանց միասին հավաքեց մի տեղ, որ եբրայերեն կոչվում է Արմագեդոն:

Մով. 3:8, Բ Մն. 35:22, Հեսու 5:14, Ջաք. 12:11. 60 մղոն(mile) Երուսաղեմից հյուսիս:

Ջաք. 12:11 - 11 Այն օրը սուգը մեծ պիտի լինի Երուսաղեմում, ինչպէս Ադադ-ռիմմօնի սուգը Մակեդոնի դաշտումը:

## Մակկեդով

- Հաբինը + 900 մարտակառքերը ջախջախվեցին - Հեսու 11:1
- Բարկն ու Դեբորան հաղթեցին Սիսարային - Դատ. 4
- Գեդեոնի 300 հոգին պարտության մատնեցին Մադիանացիներին, Ամաղեկացիներին ու արևելքի որդիներին - Դատ. 7

Մամսոնը հաղթություն տոնեց փղշտացիների հանդեպ - Դատ. 15:12

Մավուղը սպանվեց փղշտացիների կողմից

Ահազիան խոցվեց Հեուի նետով - 1 Թագ. 31

Փարավոն Նեքավոլը սպանեց Հովսիա թագավորին - 3 Թագ. 23:29

Սարակինոսներ, քրիստոնյա խաչակիրներ, եգիպտացիներ, պարսիկներ, թուրքեր, Արաբներ և այլն

Նապոլեոնի աղետալի արշավը Եգիպտոսից Սիրիա

17) Եվ յոթերորդ հրեշտակը իր թասը դատարկեց **օդի մեջ**, ու երկնքի տաճարից, գահից մի ուժգին ձայն հնչեց՝ ասելով. «**Եղավ**»: 18) Եվ փայլակներ ու ձայներ և որոտներ եղան ու մի մեծ երկրաշարժ եղավ, այնպիսին, որի նմանը դեռևս մարդկանց՝ երկրի վրա գտնվելուց ի վեր չէր եղել, այդպիսի ուժգին երկրաշարժ և այդքան մեծ:

«**Օդ**». սատանայի ազդեցության վերջին ասպարեզը: «Օդի իշխանության իշխան» (Եփ. 2:2, «բարձրեր» (Եփ. 6:12) = «երկնավորներ» (Եփ. 1:20, 3:10): «Ավարտվեց» հմմտ. «Կատարվեց»: (Tetelestai = «լրիվ վճարված է»):

«**Տաճար**». վերջին հղում: 6 անգամ հիշատակվում է բարկության թասերի հետ:

«**Երկրաշարժ**». Ես. 29:6, Սաղմ. 50:3,4, Ջաք. 14:4, 13:9, Անգե 2:6,7:

19) Եվ մեծ քաղաքը երեք մասի բաժանվեց, ու ազգերի քաղաքները կործանվեցին, և Աստծո առաջ հիշվեց մեծ Բաբելոնը, որ Իր սաստիկ ցասման գինու գավաթը նրան տա: 20) Եվ ամեն մի կղզի հեռու փախավ, ու լեռներն անհետացան:

Հայտ. 11:13, Ջաք. 14:4, Եզեկ. 47, Ջաք. 13:8,9: «Բաբելոնացիները» հիշատակվում են Հայտ. 14:8:

Ջաք. 14:4 - 4 Եւ նորա ոտները կանգնած կլինեն այն օրը Ձիթենեաց սարի վերա, որ Երուսաղէմի առաջն է դէպի արևելք, և կպատահուի Ձիթենեաց սարը միջից դէպի արևելք ու արևմուտք. Խիստ մեծ ձոր կլինի, և սարի կէսը կթաշուի դէպի հիւսիս, և կէսը՝ դէպի հարաւ:

17 և 18 գլուխներն են գալիս: Աստված է ստեղծել երկիրը, մարդը կառուցել է քաղաքները: Կոռուպցիան, ազահություն, արդարադատության առ ու ծախը, փողի պաշտամունքը, կրքի մեծարանքը, մարդկանց շահագործումը իրենց անգույն և մութ կյանքերում... Համար 20, Անգե 2:6,7, Եր. 4:23-27:

21) Եվ երկնքից մեծ կարկուտ էր իջնում մարդկանց վրա, ամեն մի հատը գրեթե մեկ տաղանդ կշիռ ուներ: Ու մարդիք հայհոյում էին Աստծուն կարկուտի պատուհասի համար, որովհետև պատուհասը խիստ ուժգին էր:

**Կարկուտ.** Հոր 38:22,23, Եր. 4:23-27: Հունական տաղանդ = 86 ֆունտ (**39 կգ**): Եբրայական տաղանդ (արծաթ) = 110 ֆունտ (**50կգ**): (Հեսու 10:10):

Հովսեփոս, Josephus. հռոմեական քարանետ մեքենաները մեկ տաղանդ ծանրության քարեր էին շարտում Երուսաղեմի վրա 70թ. Ք.Հ., երբ Տիտոսը հողին հավասարեցրեց քաղաքը: Աստվածհայհոյության պատիժը՝ քարկոծություն:

**Նշում.** այս պատիժները «օրհնյալ հույս» չեն. «Սպասելով այն երանելի հույսին և մեծ Աստված ու մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի փառավոր հայտնությանը» (Տիտ. 2:13):

Շատերը փորձում են նվազեցնել երկրի բնակչությունը. շատ ավելի ճիշտ կլինի նվազեցնել դժոխքի բնակչությունը: Դատաստանները չեն կարող ապաշխարություն առաջացնել. դրանք երբեք այդ նպատակը չեն հետապնդել: Աստված սրտերը փոխում է Իր շնորհով ու ողորմությամբ: Այս գիրքն ուղարկվել է յոթ եկեղեցիներին: Այն տրվել է մեզ, որպեսզի մեր կյանքերը փոխվեն հենց հիմա:

## Չափորդ դաս

Բաբելոն. կարդացեք 17 և 18 գլուխները: Նաև Եսայի 13 և 14, Երեմիա 50 և 51